



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-06-02 (Tel./Fax), cs@ysu.am, www.ysu.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°8

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 12.10.2016 ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻՑ

Օրակարգ

1. Դեկանի հաշվետվություն:
2. Ընթացիկ հարցեր:

1-ին հարցի վերաբերյալ

Լսեցին՝ Դեկան Վ. Դումանյանը ներկայացրեց 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների հաշվետվությունը: Ֆակուլտետը սովել է առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի, առկա ուսուցմամբ մագիստրատուրայի շրջանավարտներ: Առկա ուսուցմամբ ավարտական կուրսի 4 ուսանողներ և հեռակա ուսուցմամբ 1 ուսանող չեն ավարտել համալսարանը: Ֆակուլտետը ունեցել է աննախադեպ ընդունելություն: Առաջին կուրս են ընդունվել շուրջ 262 ուսանող (212-ը ինֆորմատիկա մասնագիտությամբ, 49-ը՝ տեղեկատվական անվտանգություն մասնագիտությամբ): Ֆակուլտետը իրականացրել է ընդունելություն «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտությամբ և կազմակերպել է ուսուցումը համաձայն «Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության համար մշակված նոր ուսումնական պլանի: Հեռակա ուսուցման 1-ին կուրս մրցույթով ընդունվել է 34 ուսանող, ինչը ևս աննախադեպ է:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում առաջին անգամ արտադրական պրակտիկան անցկացվել է «Հայկական ծրագրեր» ընկերությունում, ինչը շատ կարևոր է ուսանողների գործնական հմտությունների զարգացման առումով և ֆակուլտետը մտադիր է զարգացնել և խորացնել այս համագործակցությունը, կապեր հաստատելով տեղեկատվական ոլորտի այլ ընկերությունների հետ ևս: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են ծրագրային որոշ նոր փաթեթների, բանկային համակարգի գործունեության հետ:

«Տեղեկատվական անվտանգություն» մասնագիտության ծրագրավորման դասերի մի մասը անցկացվում է «Հայկական ծրագրեր» ընկերությունում: Ուսուցման ժամանակ լայնորեն կիրառվում է «moodle» համակարգը, որը լայնորեն կիրառվում է աշխարհի տարբեր երկրներում:

Ռոտացիայի հետ կապված ունենում ենք մեծ թվով դիմումներ և այդ պատճառով կա ռոտացիայի կարգը վերանայելու անհրաժեշտություն: Երրորդ լուծարքի կազմակերպումը զգալիորեն բարդացնում է դեկանատի աշխատանքը: Գործող ծրագրային համակարգը ամբողջովին ինքնաշխատ չէ: Պետք է մշակվի նոր համակարգ, որը պետք է լինի պաշտպանված և կարողանա բոլոր հարցումներին պատասխանել:

Արտակրթական գործունեության վերաբերյալ դեկանը նշեց, որ որոշակի առաջընթաց կա ուսանողական օլիպիադաներին ֆակուլտետի ուսանողների մասնակցության գործում: Մլավոնական համալսարանում կազմակերպված ծրագրավորման մրցույթում առաջին երեք տեղերը զբաղեցրել են ԻԿՄ ֆակուլտետի ուսանողները: Ծրագրավորման օլիմպիադայում ֆակուլտետի առաջին թիմին քիչ միավորներ չբավականացրեցին եզրափակիչ դուրս գալու համար: Կազմակերպվում են ուսանողական գիտական սեմինարներ: Ֆակուլտետի ուսանող Ալբերտ Մահակյանը մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայում ԵՊՀ թիմի կազմում նվաճել է ոսկե մեդալ: Ներդրվել է նոր համակարգ՝ Ինտրանետ, որը ավելի հստակ ցույց կտա ֆակուլտետի գիտական արտադրանքի ծավալը:

Գլխավոր խնդիրը կադրերի վերարտադրության խնդիրն է: Առկա է լսարանային ֆոնդի խնդիր: Դեկանը նաև նշեց, որ հիանալի վերանորոգվել են ֆակուլտետի երկու լսարաններ, որոնք առաջ անմխիթար վիճակում էին:

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ Ս. Նիգիյանը իր ելույթում նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում

իրականացվել են որոշակի քայլեր: Ողջունելի է համագործակցությունը ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտի «Հայկական Ծրագրեր» ընկերության հետ: Ֆակուլտետում աշխատանքային մթնոլորտ է:

Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ Յու. Հակոբյանը իր ելույթում նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մեծ ծավալի աշխատանք և դեկանի աշխատանքը կարելի է գնահատել դրական:

ԵՊՀ պրոռեկտոր Գ. Գևորգյանը իր ելույթում նշեց, որ ֆակուլտետը զգալի առաջընթաց է արձանագրել ծրագրավորման ուսանողական օլիմպիադաներում ձեռք բերված արդյունքներով: Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի աշխատակիցները հրատարակել են 46 հոդված, որոնցից 18-ը ֆիքսված է Ինտրանետ համակարգում: Շնորհիվ ներդրված համակարգի հետագայում ֆակուլտետներից գիտական հաշվետվություն չի պահանջվելու: Ինտրանետ համակարգի օգնությամբ ներմուծված տվյալները ազդելու են աշխատակցի ՈԲՖ-ում հավաքած միավորների վրա: Շուտով ԵՊՀ-ի էլեկտրոնային գրադարանում կզետեղվեն դասախոսություններ, ֆակուլտետների գիտխորհուրդներում հաստատվելուց հետո:

Երրորդ լուծարքը նշանակվում և ռոտացիայի կարգը մշակվում է նախարարության կողմից: Մոտակա երկու տարիների ընթացքում սպասվում է ուսանողների թվի կրճատում: Հետագայում, ուսանողների թվաքանակի կայունացումից հետո, տեղի կունենա համալսարանական լսարանների վերաբաշխում:

Իր ելույթի ավարտին պրոռեկտոր Գ. Գևորգյանը նշեց, որ հաշվետու ելույթում սակավ ուշադրություն էր հատկացված ՈԲՖ դասընթացներին ֆակուլտետի աշխատակիցների մասնակցության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև ֆակուլտետի ռազմավարական ծրագրի ուղղությամբ կատարված աշխատանքներին:

Որոշեցին՝ Կատարված աշխատանքը գնահատել բավարար:

2-րդ հարցի վերաբերյալ

ԼՍԵՑԻՆ՝ Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.դ. Վահրամ Ժորայի Դումանյանի «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ» ձեռնարկը որպես բուհական դասագիրք տպագրության երաշխավորելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել Վահրամ Ժորայի Դումանյանի «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ» ձեռնարկը տպագրության և առաջարկել ԵՊՀ գիտական խորհրդին միջնորդելու ՀՀ կրթության և գիտության նախարարությանը ձեռնարկը որպես բուհերի ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների համար դասագիրք հաստատելու համար:

ԼՍԵՑԻՆ - <<Հանրապետության լավագույն ուսանող -2016>> մրցույթին մասնակցելու համար ԻԿՍ ֆակուլտետի ներքոհիշյալ ուսանողներին երաշխավորություն տալու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ - <<Հանրապետության լավագույն ուսանող-2016>> մրցույթին առաջադրել ֆակուլտետի ներքոհիշյալ գերազանցիկ ուսանողներին՝

Մարիամ Սերոբի Հարությունյանին – մագիստրատուրա 2-րդ կուրս

Սյուզաննա Մասունի Սուքիասյանին – մագիստրատուրա 2-րդ կուրս

Ալբերտ Խաչիկի Սահակյանին – բակալավրիատ 4-րդ կուրս

Չնաշխարհիկ Գալուստի Մովսիսյանին – բակալավրիատ 3-րդ կուրս

Գիտական խորհրդի նախագահ

Վ. Դումանյան

Գիտական խորհրդի քարտուղար

Է. Դանոյան